Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

350.8
Ո-89
15070

ՎՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ПОСТАНОВЛЕНИЕ
о льготах персональных пенсионеров

ԵՐԵՎԱՆ
1 9 3 1

7289

2010

350.8
Ո-81
2001

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀՍԽՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՏԻ ՑԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց անհատական կենսաթոշակով ապահովելու վերաբերյալ կանոնադրություն հաստատելու մասին.

1931 թ. ապրիլի 22-ին.

ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն և Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.—

1. *Հաստատել և 1931 թ. ապրիլի 1-ից կիրարկության դնել հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց անհատական*

ՊԵՏ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ—СССР
им. А. Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

7965-17

կենսաթոշակով ապահովելու մասին
կանոնադրությունը:

2. Հիշյալ կանոնադրությունը կիրարկության դնելով, վերացվում է ՀՍՍՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1928 թ. հոկտեմբերի 5-ի, «Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց անհատական կենսաթոշակով ապահովելու մասին» վորոշումն ու կանոնադրությունը (ՀՍՍՀ Որ. և Կարգ. Ժող. 1928 թ. նո. 13, հոդ. 143).

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց անհատական կենսաթոշակով ապահովելու մասին:

ՀՈԴՎԱԾ 1.

Անհատական կենսաթոշակով ապահովվման յենթակա անձանց շրջանը:

1. Այս կանոնադրության կարգով անհատական կենսաթոշակ ստանալու իրավունքը սահմանվում է հեղափոխական, զինվորական, արհեստակցական ու հասարակական գործունեության, խորհրդային շինարարության նաև գիտության, արվեստի և տեխնիկայի ասպարեզներում հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— ԽՍՀՄ կենտգործկոմի և ԺողԿոմխորհի 1928 թ. մարտի 18-ի հաստատած Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի կադրային հրամկազմի պետական ապահովման մասին կանոնադրության յենթակա անձանց համար անհատական կենսաթոշակները նշանակվում են նույն կանոնադրության 8-րդ հոդվածում նախատեսված կարգով (ԽՍՀՄ Ող. և Կարգ. ժող. 1926 թ. նո. 20, հոդ. 131, և 1921 թ. նո. 15, հոդ. 124):

2. Անհատական կենսաթոշակ ստանալու անվիճելի իրավունք ունեն:

ա) այն հեղափոխական կուսակցությունների անդամները, վորոնք ակտիվ կերպով պայքարել են պրոլետարիատի իշխանության համար:

բ) այն անձինք, վորոնք հերոսական սխրագործությունների կամ բացառիկ աշխատանքների համար արժանացել են ԽՍՀՄ, ԱՍԽՀ և ՀՍԽՀ

կառավարությունների սահմանած մեկ կամ մի քանի շքանշանների.

գ) այն անձինք, վորոնց տրված և հանրապետության ժողովրդական արտիստի, կամ գիտության, արվեստի և տեխնիկայի վաստակավոր գործչի կոչումն:

3. Բացի այդ, անհատական կենսաթոշակ կարող է նշանակվել նաև՝

ա) այն անձանց, վորոնք ցարական կամ կապիտալիստական կառավարության կողմից հալածանքի յեն յենթարկվել ընդհատակյա հեղափոխական ակտիվ աշխատանքների համար, յեթե միայն նրանք չեն ընդդիմացել պրոլետարիատի իշխանությանը:

բ) այն ականավոր գործիչներին, վորոնք զինվորական, պետական, հասարակական, գիտական, տեխնիկական և գյուտարարական ասպարեզներում իրենց աշխատանքներով, յերկերով ու գյուտերով առանձնա-

պես արժեքավոր ծառայություններ են մատուցել խորհրդային կուլտուրային, գիտության ու տեխնիկային և աջակցել են խորհրդային պետության ամրապնդելու գործում.

գ) այն անձանց, վորոնք բացառիկ ակտիվություն են ցուցաբերել կուլակության դեմ պայքարելու գործում և այդ պայքարում խեղանդամ են դարձել:

դ) աշխատանքի հերոսներին, վորոնք այդ կոչմանն արժանացել են Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահության վորոշմամբ:

4. Այս վորոշման 2-րդ հոդվ. «ա» և «բ» կետերում և 3-րդ հոդ. «ա» «բ» և «գ» կետերում հիշված անձանց անհատական կենսաթոշակներ են նշանակվում նրանց անաշխատունակ ճանաչվելու (այսինքն՝ հաշմանդամության առաջին յերեք խմբակներից մեկում դասվելու) դեպքում, կամ յեթե տղամարդիկ 55 տարեկան՝ իսկ կանայք 50 տարեկան հասակ ունեն:

5. Անհատական կենսաթոշակ ստացող կամ ստանալու իրավունք ունեցող անձանց (հոդ. 2 և 3-րդ) մահվան կամ համապատասխան ձևով հաստատված անհայտ բացակայության դեպքում կենսաթոշակի իրավունքը ստանում են մինչև մահանալը նրանց խնամքի տակ գտնվող ընտանիքի հետևյալ անչափահաս կամ անաշխատունակ անդամները.

ա) մինչև 18 տարեկան հասակ ունեցող զավակները, յեղբայրներն ու քույրերը, այլ և նույն անձինք անկախ տարիքից, յեթե անաշխատունակ են դառել մինչև 18 տարեկան հասակը:

բ) ծնողները և ամուսինները՝ տղամարդիկ-60 տարեկան, իսկ կանայքը

55 տարեկան հասակից, կամ պատշաճ ձևով անաշխատունակ ճանաչվածները:

դ) աշխատունակ ծնողները, կամ ամուսինը, վորոնք զբաղված են մահացածի կամ անհայտ բացակայողի խնամքի տակ յեղած մինչև 8 տարեկան զավակներին, յեղբայրներին և քույրերին խնամելով:

6. Անհատական կենսաթոշակներ նշանակվում են զավակներին, յեղբայրներին և քույրերին մինչև 18 տարեկան հասակը, իսկ նրանց, վորոնք սովորում են ուսումնական հիմնարկներում, կենսաթոշակը վճարվում է մինչև տեխնիկումում կամ բարձրագույն ուսումնական հիմնարկներում ուսումն ավարտելը, բայց վոչ ավելի, քան 25 տարեկան հասակն առնելը, իսկ մշտապես անաշխատունակ ճանաչված (հոդ. 5-րդ «ա» և «բ» կետեր) անձանց՝ ցմահ:

Անհրաժեշտ դեպքերում անհատական կենսաթոշակները նշանակող հանձնաժողովը կարող է կենսաթոշակ նշանակել մահացած թոշակառուի 18 կամ 25 տարեկանից բարձր հասակում հաշմանդամ դառած զավակներին, յեղբայրներին ու քույրերին, նաև վորոնք անհատական կենսաթոշակ ստանալու իրավունքն ունեցող անձանց խնամքի տակ չեն գտնվել:

7. Անհատական կենսաթոշակներ նշանակելու մասին միջնորդությունները հարուցվում են Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատին առընթեր՝ անհատական կենսաթոշակ նշանակող հանձնաժողովի առաջ:

ա) այս կանոնադրության 2-րդ հոդվածում թված անձանց՝ թե իրենց և թե այլ անձանց ու կազմակերպությունների կողմից:

բ) այս կանոնադրության 3-րդ հոդվածում թված անձանց նկատմամբ՝ Հայկոմկուսի (բ) ԿԿ, ժողովրդական կոմիսարիատների, արհեստակցական միությունների խորհուրդների, հին բայլևիկների ընկերության, քաղտաժանակիրների և աքսորականների Ընկերության, նաև Հայկոմկուսի (բ) Կ Շրջանային կոմիտեների և շրջգործկոմների կողմից:

ՀԱՏՎԱԾ 2.

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8. 7-րդ հոդվածում նշված միջնորդություններում պետք է փաստաթղթերով հաստատված լինեն՝ այն անձի՝ Խորհրդային հանրապետությանը մատուցած ծառայությունները, վորի մասին միջնորդություն է հարուցվում, կամ նրա հեղափոխական ստաժն ու համառոտ կենսագրությունը, նաև նրա ընտանիքի կազմը և ընտանիքի անդամների տարիքը:

9. Ժողովրդական կոմիսարիատները և նրանց հավասարեցված հիմնարկությունները հարուցում են անհատական կենսաթոշակների մասին միջնորդությունները կոլեգիաների վորոշմամբ, իսկ 7-րդ հոդվածում նշված հասարակական կազմակերպությունները՝ նրանց ղեկավար մարմինների (Կոմիտեի նախագահության և այլն) վորոշմամբ:

10. Անհատական կենսաթոշակներ նշանակելու մասին միջնորդությունները քննության է առնում Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատին առընթեր անհատական կենսաթոշակներ նշանակող հանձնաժողովը՝ նախագահությամբ Սոցիալական Ապահովության

ժողովրդական Կոմիսարի կամ նրա տեղակալի և անդամակցությամբ ՀՍԽՀ Աշխատանքի ժողովրդական Կոմիսարիատի, Ֆինժողկոմատի, Ռազմական գերատեսչության, Արհմիությունների Խորհրդի ներկայացուցիչների, որոնց անձնապես նշանակում է ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը:

11. Անհատական կենսաթոշակ նշանակող հանձնաժողովի վճիռները վերջնական են և վերանայվում են միայն 7-րդ հոդվածում նշված հիմնարկությունների, կազմակերպությունների և անձանց միջնորդությամբ, յերբ անհատական կենսաթոշակներ նշանակելու համար հիմք ծառայելու եական նոր տվյալներ են հայտնաբերվում:

12. Այս կանոնադրության կարգով անհատական կենսաթոշակները նշանակում են անկախ այն լոնից, թե բացառիկ

ծառայություններ, մասնացած անձի գործունեությունը վորտեղ ընթացել, յեթե միայն այդ անձը ներկայումս ապրում է ՀՍԽՀ սահմաններում:

13. Հանձնաժողովում ստացված և պատշաճ ձևով ձևակերպված միջնորդությունները պետք է քննության առնվեն ստացվելու որից մի ամսվա ընթացքում:

14. Անհատական կենսաթոշակը նշանակվում է միջնորդությունը ստանալու ամսին (հոդ. 13) հաջորդող ամսի 1-ից. անհրաժեշտ դեպքերում կենսաթոշակը կարող է նշանակվել նաև ավելի վաղ ժամանակից:

15. Անհատական կենսաթոշակի իրավունքից զրկելը կարող է տեղի ունենալ միայն այդ կենսաթոշակը նշանակող մարմնի վորոշմամբ և հետևյալ դեպքերում:

ա) յերբ վերջին ատյանի վճռից հետո՝ անհատական կենսաթոշակ ստա-

ցողը սահմանված կարգով զրկվում է խորհուրդների ընտրական իրավունքից։

բ) յերբ դատական վճռով նախատեսվում է կենսաթոշակի իրավունքից զրկելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կենսաթոշակի իրավունքից դատարանով զրկված անձի կողմից դատական վճիռը բողոքարկելու դեպքում անհատական կենսաթոշակի իրավունքի հարցը քննության և առնվում այդ կենսաթոշակը նշանակող մարմնի կողմից միայն վերջին ատյանի վճիռը կայացնելուց հետո. իսկ մինչ վերջին ատյանի վճիռ կայացնելը՝ կենսաթոշակը վճարվում է ընդհանուր հիմունքներով։

16. Անհատական կենսաթոշակ նշանակող հանձնաժողովի վարչման մեջ պետք է նշված լինի, թե վոր ժամանակից և ինչ չափով է կենսաթոշակ նշանակվում, իսկ բացառիկ ծառայություններ մատուցած անձանց ընտանիքների անդամներին կենսաթոշակ նշանակելիս, պետք է նշված լինի, թե ընտանիքի յուրաքանչյուր անդամին կենսաթոշակի վոր մասն է նշանակվում, յեթե նրանք իրարից բաժան են ապրում։

17. Անհատական կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ միջնորդությունների հետևանքների մասին հանձնաժողովը հաղորդում է միջնորդություն հարուցող թե հիմնարկություններին և թե անձանց։

18. Եթե անհատական թոշակառուն դատումն ունի, վոր նրան նշանակված անհատական կենսաթոշակի դումարի հետ միասին գերազանցում է պատասխանատու քաղաքական աշխատավորների համար տարիֆային առաջին գոտում սահմանված բարձր տարիֆի դրույքի (այդ դրույքը ծանրաբեռման համար տրվող հավելու-

մով հաշված), ապա այդպիսի դեպքում անհատական կենսաթոշակը համապատասխան չափով նվազեցվում է։ Դատումը պակասելու կամ նրանից զրկելու դեպքում կենսաթոշակը ավտոմատիկ կերպով կամ վերականգնվում է լրիվ չափով և կամ ավելացվում է համապատասխան չափով, վորպեսզի դատումի և կենսաթոշակի ընդհանուր գումարը չգերազանցի այս հոդվածով սահմանված առավելագույն չափից (մաքսիմումից)։ Կենսաթոշակի վճարման կանգեցումը չի զրկում անհատական թոշակառուին այս կանոնադրությամբ տրված բոլոր մնացած իրավունքից և առավելություններից։

19. Անհատական թոշակառուի բնակավայրը ՀՍԽՀ սահմաններում փոխելու, ինչպես նաև խորհրդային այլ հանրապետություն տեղափոխելու հետևանքով, վոչ մի դեպքում

չի կարող կենսաթոշակը կարճվել կամ նշանակված կենսաթոշակի չափը պակասեցվել։

20. Այն դեպքերում, յերբ անհատական կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց նկատմամբ տկարամտության, հոգեկան հիվանդության, ֆիզիկական անկարության և այլն հետևանքով՝ «Ամուսնության, ընտանիքի և խնամակալության մասին» որենսդրության համաձայն նշանակված է խնամակալություն կամ հոգատարություն, անհատական կենսաթոշակ նշանակող հանձնաժողովն իրավունք ունի խնամակալության և հոգատարության մարմիններից պահանջելու խնամակալներ և հոգատարներ նշանակել, նաև կարող է՝ նշանակված խնամակալներին ու հոգատարներին մերժել ու նրանց փոխարինումը պահանջել։ Վերջիններին նշանակելիս, խնամակալության և

1788

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ — СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2255-17

հոգատարության մարմինները պետք է ձեռք առնեն բոլոր միջոցները, որպեսզի խնամարկյալների շահերը բազմակողմանիորեն նկատի առնված և ապահովված լինեն։

ՀԱՏՎԱԾ 3.

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

21. Անհատական կենսաթոշակների նորմաները նրանց վճարման կարգը և միջոցների աղբյուրները որոշվում են ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից. կենսաթոշակների չափը պետք է կախումն ունենա այն անձի մատուցած բացառիկ ծառայության աստիճանից և բնույթից, որին կենսաթոշակ է նշանակվում, նաև նրանց աշխատանքն ու գործունեությունը պարզող այլ հանգամանքների հաշվառումից։

ՀԱՏՎԱԾ 4.

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

22. Անհատական կենսաթոշակ ստացող անձինք այս կանոնադրության հիման վրա կարող են անդամագրվել հաշմանդամների կոոպերատիվ միավորումներին (արտելներին) առանց կենսաթոշակի իրավունքը և 5-րդ հատվածում թված արտոնությունները ու առավելությունները կորցնելու, անկախ այդ միավորումներում անդամ լինելու ժամանակի տևողությունից։ Հաշմանդամների արտելում անդամագրված թոշակառուներին անհատական կենսաթոշակ վճարելիս այս կանոնադրության 18-րդ հոդվածի համաձայն հաշվի

յեն առնվում արտելում ստացած նրանց դատումները։

23. Հաշմանդամների արտելի մեջ մտնելիս, անհատական թոշակառուն մուծում է իր փայավճարն արտելի կանոնադրության հիմունքներով և ՀՍՍՀ Սոցիալական Ապահովության ժողովրդական Կոմիսարիատի գործող կանոնների և կարգադրությունների համաձայն։

24. Անհատական կենսաթոշակ ստացող անձինք ցուցակագրվում են Աշխատանքի Կոմատի կադրերի բաժնում և աշխատանքի յեն ուղարկվում հերթից դուրս, իսկ նրանց ընտանիքի անդամները՝ արհեստակցական միությունների անդամ-բանվորների հետ հավասար հիմունքներով։

ՀԱՏՎԱԾ 5.

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

25. Անհատական թոշակառուները բնակարանավարձը վճարում են բանվորների և ծառայողների համար սահմանված բնակարանավարձի դրույքներով–10–ից մինչև 50% զեղջով։ Զեղջի չափը, թոշակառուների ծախքերին նայած, սահմանում են տեղական խորհուրդները բնակելի տարածության ավելցուկի և լրացուցիչ տարածության համար թոշակառուները վճարում են սովորական չափով։

26. Անհատական թոշակառուներն իրենց դրաղեցրած բնակարանից կարող են վտարվել (կամ տեղափոխվել) միայն դատարանի վճռով և այն էլ

տրամադրելով նրանց՝ բնակության համար ազատ բնակարան, տարածությամբ վոչ պակաս նրանց զբաղեցրածից, նաև տրամադրելով փոխադրության միջոցները։

27. Անհատական կենսաթոշակները ազատվում են բոլոր տեսակի հարկերից ու տուրքերից։ Եթե անհատական թոշակառուն կենսաթոշակից բացի ունի այլ յեկամուտներ ու դատումներ, այդ դեպքում հարկվում են միայն այդ յեկամուտները կամ դատումները, յեթե գերազանցվում են հարկով մինիմումից, իսկ անհատական կենսաթոշակը հարկվող յեկամուտի մեջ չի մտցվում։

28. Բացի այդ, անհատական թոշակառուները տեղական հարկերի նկատմամբ վայելում են հետևյալ արտոնությունները.—

ա) չինությունների հարկից ազատվում են անհատական թոշակառուներին պատկանող չենքերը, յեթե այդ չենքերը զբաղեցրել են անմիջորեն իրենք թոշակառուները, նրանց ընտանիքները և չեն շահագործվում, վարձակալության միջոցով։

բ) փոխադրական միջոցների հարկից ազատվում են անհատական թոշակառուներին պատկանող փոխադրական միջոցները (ձիերը, հեծանիվները և այլն), յեթե հատկապես թոշակառուներին ու նրանց ընտանիքներին են ծառայում։

գ) անասունների հարկից ազատվում են անհատական թոշակառուներին պատկանող և անհատական թոշակառուների ու նրանց ընտանիքների կարիքների համար ոգտագործվող անասունները։

29. Անհատական թոշակառուները վայելում են ձրիաբար և հերթից դուրս ամեն տեսակի բժշկական, դեղորայքով և պրոտեզներով ոգնու-

թյուն ստանալու իրավունք, իսկ նրանց ընտանիքի անդամները՝ ապահովագրված բանվորների հետ հավասար հիմունքներով:

Սանատորա-կուրորտային ոգնության նկատմամբ անհատական թոշակառուները հավասարեցվում են բանվորներին: Բացի դրանից, այդ անձինք կարող են հանձնաժողովների կողմից կուրորտներ և սանատորիաներ ուղարկվել ի հաշիվ Սոցիալական Ապահովության Ժողովրդական Կոմիսարիատի միջոցների, վոր բաց և թողնվում անհատական կենսաթոշակներ վճարելու համար:

30. Անհատական թոշակառուներն իրավունք ունեն հերթից դուրս ընդունվել սոցիալական ապահովության հիմնարկներում (հաշմանդամների տներ և այլն) և Առաջողկոմատի հիմնարկություններում) խրոնիկների, տարվմատիկների տներ, նյարդային և հոգեկան հիվանդների համար հատուկ հիմնարկություններ և այլն, իսկ նրանց ընտանիքի անդամներն ընդունվում են նույն հիմնարկություններում ապահովագրված բանվորների հետ հավասար հիմունքներով:

31 Անհատական թոշակառուների դավակները և նրանց խնամքի տակ ապրող անձինք ուսումնական բոլոր (ստորին, միջին և բարձրագույն) հիմնարկներում և կրթական դաստիարակչական հիմնարկներում (մանկատներ և այլն) ընդունվում են հերթից դուրս և յեղած տեղերի ու թոշակների նկատմամբ դերադասվում են մյուս բոլոր թեկնածուներից և ազատվում են ուման վճարից: Նույն արտոնությունները տրվում են անհատական թոշակառուներին ամեն տեսակի դասընթացներ, բանվորական ֆակուլտետներ, տեխնիկումներ, բարձրագույն կամ մասնագի-

տական ուսումնական հիմնարկներ մտնելիս:

32. Անհատական թոշակառուներն իրավունք ունեն անդամագրվել ՀՍԽՀ բոլոր կոոպերատիվ կազմակերպություններին անխտիր: Կոոպերատիվ կազմակերպության մեջ մտնելիս, նրանք փայավճար և անդամավճար են մուծում ավյալ կոոպերատիվում սահմանված նվազագույն չափով. բացի այդ, նրանք ոգտվում են սպառողական և տնտեսական կարիքները ամբողջ կոոպերատիվ ցանցի կողմից սպասարկելու իրավունքից կոոպերատիվի անդամ-բանվորների հետ հավասար չափով:

Անհատական թոշակառուները կոլտնտեսությունների մեջ մտնելիս ոգտվում են չքավոր տնտեսությունների համար սահմանված արտոնություններից:

33. Անհատական թոշակառուների

համար այս կանոնադրությամբ սահմանված բոլոր արտոնությունները տարածվում են նաև ՀՍԽՀ սահմաններում ապրող այն անձանց վրա, որոնք ԽՍՀՄ և ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների որոշումների հիման վրա անհատական կենսաթոշակ են ստանում:

34. Սոցիալական ապահովության մարմինները պարտավոր են անհատական թոշակառուների նկատմամբ առանձին ուշադրություն և խնամք ցուցաբերել, մասնավորապես ձեռք առնել բոլոր միջոցները, որպեսզի օրենքով նրանց տրված բոլոր արտոնություններն ու առավելությունները ապահովված լինեն, և պատշաճ դեպքերում այս կանոնադրությունը խախտող անձինք յենթարկվեն պատասխանատվության:

Հ Ա Տ Վ Ա Ծ 6.

ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ

35. Այն անձինք, վորոնք տեղական նշանակություն ունեցող նշանավոր ծառայություններ են մատուցել, (տուժել են կուլակների դեմ մղվող պայքարում) ունեն տեղական կուլտուրայի ասպարիզում աչքի ընկնող ծառայություններ և այլն) անհատական կենսաթոշակ են նշանակվում այս կանոնադրության համապատասխան՝ տեղական բյուջեների միջոցներից և շրջանային գործադիր կոմիտեների վորոշումներով:

36. Տեղական անհատական կենսաթոշակ ստացող կամ ստանալու իրավունք ունեցող անձանց մահվան կամ անհայտ բացակայության դեպքում

կենսաթոշակը նշանակվում է նրանց ընտանիքի անդամներին այս կանոնադրության կանոնների համապատասխան:

37. Տեղական անհատական կենսաթոշակ ստացող անձանց և նրանց ընտանիքի անդամների համար արտոնությունները և առավելությունները սահմանվում են համապատասխան շրջանային գործադիր կոմիտեները:

Կենտրոնական Գործադիր կոմիտեի
Նախագահ՝ Ա. ԱՆԱՆՅԱՆ

Ի. տ. Ժողովրդական Կոմիսարների
Խորհրդի նախագահի՝
Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

Ի. տ. Կենտրոնական Գործադիր
Կոմիտեի Քարտուղարի՝
Գ. ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — СССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվ. № 4566 Գլավլիտ 6784 (բ) Տիրաժ 500

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0047781

559